

RAYMOND H. KEVORKIAN, ARMEN TER-STEPANIAN, avec le concours de Bernard Outtier et de Guévorg Ter-Vardanian, Manuscrits arméniens de la Bibliothèque Nationale de France. Catalogue. Bibliothèque Nationale de France (Fondation Calouste Gulbenkian). Paris, 1998. 1072 p.

Չրանսիայի Ազգային գրադարանում հանգրվանած հայերեն ձեռագրերը 1908 թ. արդեն հայագետներին հայտնի են Ծ. Մակլերի հեղինակությամբ լույս տեսած նկարագրությամբ, որ ներկայացված է 323 միավոր Մինչև այդ նկարագրությունն էլ հայ ու ֆրանսիացի առանձին հայագետներ անմիջականորեն ճանաչում էին սույն հավաքածուն, նրանից քաղված հրատարակումներ էին կատարել Ղ. Ալիշանը, օրինակ, Փարիզում պաշտոնավարելու տարիներին ընդօրինակել ե «Սոփերք հայկականում» հրատարակել է վարքեր ու վկայարանություններ, ճառեր ու ներդրումները ն. Բյուզանդացին իր բնագրական սրբագրությունները կատարելիս ոչ հաջվադեպ նկատի է առնում այս հավաքածուի ընդհանուր ընթացումները ես: Առավել հաճախ Ազգային գրադարանի ձեռագրերին դիմելու առիթ է ունեցել Ղ. Արարիկը (Մանավանդ Վարդանի վարդապետի «Աշխարհացոյցը» պատրաստելիս): «Յայսմատուրբի» ընթացի ու թարգմանության երկհատոր հրատարակություն կատարելիս ես հիշյալ հավաքածուի ձեռագիրը հիմնական կիրառություն է ունեցել: Եվ այնուամենայնիվ, ի նոր ցուցակագրելու անհրաժեշտությունը շատ առումներով հիմնավորված պիտի նկատել նախ, ինչպես Ռ.—Ղ. Գևորգյանի ներածական ուսումնասիրությունից է պարզվում, Ծ. Մակլերը երբեմն նկարագրությունը քաղել է նախորդների կատարած աշխատանքից, ուստի դժվար է եղել ապահովել ձեռագրական նյութի միասնական ներկայացում: Առկա հիշատակարան-հիշատակագրությունների ընդհանուր տրվելը ոչ միշտ են նկատի առնվել՝ գրչագրության ժամանակը, վայրը, գրչի, ստացողի կամ խմբագրի ինքնությունը պարզելիս: Կան նույնիսկ դեպքեր, երբ ձեռագրում գտնվող այս կամ այն ընթացի պարզապես դուրս է մնացել նկարագրության ցանկից: Այսպես, օրինակ, Շուշանիկի Վկայարանության «Սոփերքյան» հրատարակությունը կատարված է ըստ Ազգային գրադարանի № 178 ձեռագրի (հին համարը՝ 88), սակայն Մակլերի ցուցակում այն հիշատակված

չէ (տե՛ս ցուցակի 98—99 էջերը): Բնական է, որ նկարագրության կարոտ էին հավաքածուի նոր ձեռագրությունները և, ի վերջո, ձեռագրերի առանձնական ներկայացումից ոչ պակաս կարևոր է նրա գույքման պատմությունը: Ռ.—Ղ. Գևորգյանը խղճատորեն ուսումնասիրել է հավաքածուի վերաբերող բոլոր արխիվային նյութերը, ուրվագծել Արևելքի երկրներով ու մշակութային կենտրոններով Ֆրանսիացիների գրգռմանը, միաժամանակ տվել ֆրանսիական հայագիտության ձևավորման համառոտ շարադրանք՝ սկսած Պետիս դը Լա-Կրուայի (1653—1716 թթ.) հայագիտական գործունեությունից: Ի դեպ, Ռ.—Ղ. Գևորգյանին ենք պարտական Կ. Պոլսո առեւանգյալ պատրիարք Ավետիք Եվզովիացու խորհրդավոր կենսագրության վերջին շրջանը լուսաբանելու համար (այսինքն է դր Լա-Կրուայի հարկի տակ, եղել է նրա հայագիտական հանձնարարությունների կատարողն ու խորհրդատուն): Ներածականում եղած դիտարկումներն ու հրատարակումները ղուտ ձեռագրագիտականից բացի ունեն ընդհանուր մշակութաբանական-ճանաչողական արժեք, Մենք առայժմ շունչով հայկական ձեռագրական հավաքածոների լիարժեք պատմություն (Բեռնար Քուլին կազմել է նրանց մատենագիտությունը, իսկ գոյացման պարագաները նրան շնչեղեղեցնում): Հիշյալ առումով ուշագրավ տեղեկություններ կան Արևելք (Կ. Պոլիս) առաքելության մեկնած Ֆրանսուա Սեյն և Միշել Ֆուրմոն արքաների գրած նամակներում (1730-ական թթ.), որ քաղվածաբար բերում է ներածության հեղինակը: Ըստ նամակներից մեկի, պոլսաբնակ մի ոսկերիչ ունեցել է 250 միավորից բաղկացած մի հավաքածու: Առանձին դեպքերում կարելի է կոստանույնիսկ նրանցից մի քանիսի բովանդակությունը: Հայկական ձեռագրերի մշակութային կարևորությունը գիտակցող այս օտարականները հանուն արժեքների ձեռքբերման շնչառում նույնիսկ, ինչպես իրենք են որակում՝ քստմենիլ եղանակների դիմելուց, երբ թափարների կամ ձեռքվիտ հայի ձեռքբերով վանքից գողանում են ձե-

նագրերը Ուստի միանգամայն հավաստի պիտի նկատել Մ. Կարապետյանի վերջերս կատարած մի վկայակոչությունը, երբ Հոռոմ սպաստանող Պոլսո պատրիարքը գանգատվում է, թե «...այլ ոչ գիրք մնաց, ոչ եկեղեցու սպասր, ամէնն գրաւեցաւ, զըստակն ի այլազգիքն տաք և ոչ ևմք հանդիսո» (ՊԲԶ, 1998, Ն: 1—2, էջ 173):

Հայկական ձեռագրեր ժողովելու շահագրգռությունը պայմանավորված էր արևելագիտական-մշակութարանական հետաքրքրության ծավալումով: Այժմ պարզվում է, որ արքայ Վիլհելմի իրավիկն կանխորոշել է նորությունների այն շարքը, որ սպասելի է հայերենով ավանդված մատենագրության ուսումնասիրությունից: «Համարձակվում ևմ ասելու,— զրել է նա,— որ եղել են դարեր, ինչպիսիք [են] 9, 10, 11, 12 և 13, երբ Հայաստանը կարող էր դասեր տալ երկրագնդի մեծ մասին և որ այդ ամբողջ մասնակ նա երևելի մարդիկ է ունեցել գիտության ցանկացած ճյուղում՝ աստվածաբաններ, սուրբ ճարտասաններ, բանաստեղծներ, իմաստասուրներ, ծիսագետներ, պատմիչներ, աստղագետներ, քաջհմուտ թարգմաններ, հունարեն, ասորերեն, արաբերեն, պարսկերեն և լատիներեն լեզուներին հմուտ մարդիկ»:

Ձեռագրացուցակը կազմողները, մանավանդ ներածության և ցանկերի հեղինակ Ռ.—Է. Գևորգյանը, ջանացել և հաջողությամբ պարզել են հավաքածու ընդգրկված միավորներից շատերի Ֆրանսիա հասնելու պատմությունը, եթե կարելի է եղել՝ նաև նրանց գաղափար օրինակը, իսկ հաճախ էլ՝ նրանցից կատարված ընդօրինակումները: Ուրեմն կարող ենք արձանագրել, թե կատարվել է որոշակի ձեռագրագիտական-ազդյուրագիտական աշխատանք: Առանձին դեպքերում նկարագրությունն օժտված է մատենագի-

տական տեղեկանքներով՝ եթե բնագրական հրատարակությունը կատարված է ըստ նշյալ օրինակի: Այս խնդրում նկատելի է հայագետ-վրացագետ-արևելագետ Բ. Ութիկի փորձառությունը: Ուրախալի է, որ կազմողները հետևել են Մաշտոցի անունը կրող մատենագրանի՝ տարիներ անշարունակություն մնացող հատորի օրինակին, նկարագրությունն օժտելով կարևոր նրկատվող գրչության նմուշներով:

Ցուցակի դործածությունը հեշտացնելու և նյութերի ճանաչումը ակներև դարձնելու համար կիրառված է երկրկզվայնություն՝ ներածություններ, ձեռագրերի անվանումները, ալյագրություն ունեցող տնձնանունները տալով աշխատանքային ֆրանսերեն և ընդգրակական հայերեն լեզուներով: Զգալի է խմբագիր Գ. Տեր-Վարդանյանի աշխատանքը:

Արդեն նկատելի դարձավ, որ Ցուցակի կազմության հիմնական ծանրությունը կրել է Աղզային գրադարանի հայկական բաժնի և Նուսյարյան Մատենագրանի միաժամանակյա տնօրեն, նորահաստատ «Revue d'histoire armenienne contemporaine» բովանդակային ու օգտաշատ հանդեսի խմբագիր, «Հայաստանը Արևելքի և Արևմուտքի միջև» մեծադիր ժողովածուի կազմող-հրատարակիչ, այդ իսկ խորագիրը կրող ցուցահանդեսի ու միջազգային գիտաժողովի կազմակերպիչ, արևմտահայության նոր պատմության փաստային մեկնագրության հեղինակ Ռայմոնդ-Հարություն Գևորգյանը: Պողարյանի, Ս. Ճեմճեմյանի և մերօրյա մյուս նվիրյալների ցուցաբերած հետևողականությունը, օժանդակ հավաքածուների հատորավոր նկարագրությունը պարտավորեցնող իրողություն է, որին մեծ ուշացումով պիտի հետևեն խոշորագույն հավաքածուն՝ հրևանի Մատենագրանը տնօրինողները:

Պատմ. գիտ. դոկտոր Պ. Մ. ՄՈՒՐԱԿՅԱՆ